

ԱՅԼԵՒԱՅԼ

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՐ ՄԸ

ԱՌ ՆԱԽԱԳԱՀ ԳԻՐՄԱՆ ՌԱՅԻՒ

ԳԵՐ. ՀԱՅՐ

Այժմ որ հայկական կոտորածներուն և արհաւիրքին՝ գիտաւոր հեղինակներէն՝ Քալէաթի մահաւան վճիռի գործադիր մեր հայրենակից Թէյլէրեան անպարտ արձակուած է, պատիւ կը համարիմ ուղարկել ձեզ առ ի հրաշարակութիւն՝ իմ Գերման Ռայխի Նախագահին ուղղած բաց նամակին թարգմանութիւնը: Ինչպէս պիտի տեսնէք՝ գրեթէ միևնոյն սկզբունքն ու փաստերն են, որ հիմունքը կը կազմեն տեղի ունեցած դատաւարութեանը և իմ պաշտպանողականին, որ իր ժամանակին ազգ. Վարիշ մարմինն ու շաղկութեանն ալ յանձնուած է անշուշտ:

Հանեցէք ընկուտիլ, Գեր. Հայր, խորին յարգանացս հաստատին:

ՍՏ. ՄԱՌՈՒՆԵՆ

5 Յուլիս 21

Պարոն Նախագահ

Ձեր Ռայխի ոստանը թատերավայրը կը հանդիսանայ գերազանցապէս արդար արարքի մը. իրաւաբար և պատժապարտ՝ համահաստատ կը գտնուին իրենց իսկական դերին մէջ: Առաջինը՝ իրագործած ըլլալուն համար երկար ժամանակ անգործագրելի մնացած վճիռ մը, երկրորդը՝ իր ոճիրները վերջապէս քաւած ըլլալուն համար: Արդարեւ սպաննիչը զոհ մ'է, մինչդեռ սպանեալը՝ հասարակ մարդաւան մը, որ արհամարհուած, ամէն երկրէ վտարուած և իր իսկ հայրենիքի դատաւրաններէն դատաւարտուած՝ ապաւանտ գտած էր ձեզ մօտ: Մակայն դուք պարտաւոր էիք զայն յանձնել Դաշնակիցներուն՝ համաձայն պայմանագրի մը, որ կը պարտադրէ պատերազմին տևողութեան Գերմանիոյ մեղսակցութեամբ տեղի ունեցած ջարդերուն և աւարառութեանց հեղինակներուն արտաքսումը: Մեղսակցութիւն

կ'ըսեմ, որովհետեւ գիշողութիւն դէպի մեղապարտը՝ կը նշանակէ համախոհութիւն ի չարիս: Բայց և այնպէս անկողմնակալութիւնը կը պարտաւորէ զիս խոստովանելու, թէ Համաձայնութեան պատասխանատուութիւնները նուազ մեղադրելի չեն քան անոնք՝ որ կը ծանրանան Գերմանիոյ վրայ, որ թուրքերուն թոյլատրեց իրենց վատ արարքը, իբր դաշնակից և պատերազմին ընթացքին մէջ. մինչդեռ Համաձայնակիցները կը թոյլատրեն նոյն չարագործութիւնները՝ որպէս յաղթականներ և զինադադարի միջոցին: Անաչառութիւնը պարտք կը դնէ նաև վրաս խոստովանելու, թէ Գերմանիա նման կարգ մը ուրիշ պատերազմիկ պետութեանց՝ երկողմադրուած չէ եղած դէպի իր դաշնակիցները կամ բարեկամները: Բայց Համաձայնութեան մեղքն ու սխալները կ'արդարացնեն միթէ ձեր յանցանքները:

Բայտ ձեզ ոճրագործը ապրելով ի Բերլին՝ կեղծ անուան տակ՝ գերման ոստիկանութիւնն ու իշխանութիւնը կ'անգիտէին անոր ինքնութիւնը: Ձեր մէջ բերած հաւաստիացման յերիւրանք մ'ըլլալուն չի կրնար չկապակածիլ՝ ով որ իրազեկ է ձեր երկրին հանրային ապահովութեան բարւոք կազմակերպութեանը, աչքի առաջ ունենալով մանաւանդ ձեր հիւրին աստիճանը, «Նիւր տոհմիկ յոյժ մեծարեցի»:

Կամ դուք գիտէիք թէ Քալէաթ կը գտնուէր ի Բերլին, որով և ձեր կառավարութիւնը պատերազմին տևողութեանը՝ ինքն անձամբ իր վրայ բարդած պատասխանատուութիւններէն զատ՝ իր վրայ հրաւիրած կ'ըլլայ նաև զինադադարէն ի վեր գոյացած պատասխանատուութիւնները, որոնք մինչև այժմ Դաշնակիցներուն վրայ միայն կը ծանրանային, և կամ դուք ճշմարտօրէն կ'անգիտէիք մեղապարտին ներկայութիւնը ձեր մէջ: Ուրեմն և հայ իրաւաբար պարմանին ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայ գերման իշխանութեանց՝ երևան հանելով իրողութիւն մը՝ զոր անոնք չպարտէին անգիտանալ, և որոնք հարկադրուած են հետևաբար ի կատար

ածել պարտ ու պատշաճ վճիռով մը՝ իրենցմէ դուրս ձեռնարկուած արդարութեան գործը: Բան մը՝ որ կարելի չէ սյալապէս, բայց եթէ ամբաստանեալին անպարտ արձակուումով: Ամբաստանեալը կ'ըսեմ, որովհետեւ ներկայ պարագային մէջ սպաննիչը տուական մարդասպան մը չէ, այլ զոհ մը, ստիպեալ ինքնին կատարելու արդարութեան գործը: Այդու ան կը հանդիսանայ պարտաճանաչ փոխանորդը կառավարութիւններուն, որք թելաքան իրենց պարտաճանաչութեանց մէջ, ժողեցիին իրենց երդումը, սփռելով աւեր, մահ ու կողոպուտ՝ ծագաց ի ծագս աշխարհի:

— Կառավարութիւն և Արդարութիւն տարբեր բաներ են. Կառավարութիւնը՝ գործադիր մարմին՝ իրաւասութիւնը չունի, պիտի ըսէք, Արդարութեան գործերուն խառնուելու —: Առարկութիւնը անհիմն չէ տեսականին մէջ, բայց գործնականին մէջ խնդիրը բոլորովին տարբեր է, և այդպէս ալ պիտի ըլլայ՝ ցորչապի արդարութեան բաշխման եղանակը կը մնայ նոյնը: Չեր իսկ երկրին բարեբեքին համար ստիպուած էք անտես չառնել այս կէտը: Ես ձեզմէ չեմ սպասեր արդարադատութիւն և միայն արդարադատութիւն: Ներկայս կոչ մ'է որ ձեզ կ'ուզեմ, որպէս զի ըլլաք հեռատես և գործէք շրջահայեցութեամբ ձեր իսկ ժողովուրդին օգտին համար: Գիտեմ թէ «Պետական մարդու մը սիրտը իր գլխուն մէջ գտնուելու է», և ձեր ողջմտութեանն է որ կ'ընեմ այս դիմումը: Ինչ որ ձեզմէ կը պահանջուի՝ չեն այն գեղեցիկ առաքինութիւնները, որք կը բարձրացնեն մարդը, կ'ազնուացնեն անհատը. այլ այն յատկութիւնները՝ որք անհրաժեշտ են հաւաքականութեան մը պետին՝ իր ստանձնած պարտականութիւնները կարենալ կատարելու համար: Գուցէ գիտնալու էք թէ որո՞նք են այդ յատկութիւնները: Բայց դուք պարտք մանաւանդ աչքէ չվրիպեցնել այն բանը՝ թէ դուք այլ ևս յարձակողական դիրքի մը մէջ չէք գտնուիր, և թէ արդարադատութեամբ գործելով՝ շահած պիտի ըլլաք աշխարհի

յարգանքն ու համակրանքը, որք ըլլալով հանդերձ յաջողութեան անկշռելի ազդակներ միայն՝ չեն դադրիր բնաւ կարևոր դեր մը խաղալ ձեր երկրին նման պաշտպանողական դիրքի դատապարտուած երկրի մը վերանորոգման կենտոն խնդրոյն մէջ:

Երկդիմի խօսքերը, խաբեպատիր խոստումները, այլ ևս չեն գոհացներ ժողովուրդներու խիղճն ու գիտակցութիւնը: Անոնք կը պահանջեն՝ յօգուտ Հանրութեան՝ արդիւնաւոր գործ, արդար վճիռներ: Անոնք խնամով կ'արձանագրեն դէպքերը՝ լաւագոյն իմն ճշդելու, չափելու և կշռելու համար վարիչներուն մանր պատասխանատուութիւնները, վարչներուն՝ որոնցմէ իւրաքանչիւրը ըստ իրեն արարեին՝ վերջնականապէս պիտի դատուի իր երկրին պատուհաններուն կամ բարերարներուն կարգին: Ահա այդ է հարցը. Կառավարութիւն անուան արժանի կառավարութիւններուն կը մնայ տալ անոր պարտապատշաճ լուծումը:

ՄՏ. ՄԱՌԻՆԵԱՆ

17 Մարտ 1921

ԻՆՉ Է ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութիւնը համաշխարհային լեզու մ'է, լեզու մը՝ որ հոգիէ հոգի կը խօսուի և թարգմանուելու պէտք չունի:

ԱՌԻԲՐԱՆ

Երաժշտութիւնը գերագոյն յայտնութիւն մ'է հոգևոր կենաց:

ՊԵՏԼՈՎԻՇ

Երաժշտութիւնը կրնայ սահմանուիլ իրեւարին հոգւոյ, որովհետեւ կը զգաս անոր շրջանը երեւելու ուղեղի ամենաթանձուկ թելերուն մէջ, ինչպէս արիւնը շնչերակներու և երակներու մէջ:

ԿՈՒՆԻՈՒՍՅԱՆ

Երաժշտութիւնը սիրոյ կերակուրն է:

ԵԼԻՍԱԲԵ

Երաժշտութիւնը սրտի գրականութիւնն է. կը սկսի հոն՝ ուր խօսքը կ'աւարտի:

ԼԱՄԱՐԻՆ